

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

Յուրաքանչյուր թեստում առաջարկվում է 4 պատասխան: Ընտրեք միայն մեկը, որը, ըստ Ձեզ, առավել ճիշտ է և ամբողջական:

1. Ծաղկավոր բույսերի սերմնամաշկը առաջանում է

1. – զիգոտից
2. – կենտրոնական բջջից
3. – սերմնարանի պատերից
4. – սերմնասկզբնակի ծածկույթից

2. Քրոմոսոմների ի՞նչ հավաքակազմ ունի սոճու սերմի առաջնային էնդոսպերմը

1. – հապլոիդ
2. – դիպլոիդ
3. – տրիպլոիդ
4. – պոլիպլոիդ

3. Լյարդի ծծանի սեռական բազմացումը տեղի է ունենում

1. – ջրում
2. – մոլյուսկի (փափկամարմինների) մարմնում
3. – խոշոր եղջերավար անասունների օրգանիզմում
4. – ջրում և խոշոր եղջերավար անասունների օրգանիզմում

4. Ճանձերը և մոծակները պատկանում են .

1. – նույն կարգի տարբեր ընտանիքներին
2. – նույն դասի տարբեր կարգերին
3. – նույն տիպի տարբեր դասերին
4. – նույն ընտանիքի տարբեր ցեղերին

5. Երկկենցաղներն առաջացել են

1. – նշտարիկից
2. – կռճիկային ձկներից
3. – վրձնալողակ ձկներից
4. – երկշունչ ձկներից

6. Բակտերիաների կարգաբանական հասկանիշը.

1. – մտրակների առկայությունն է
2. – բջիջների չափսերն են
3. – բակտերիաների ձևն է
4. – ասիմիլյացիայի տիպն է

7. Միկոբիզա են առաջացնում

1. – պենիցիլը
2. – հաբեթասունկը
3. – բորբոսասունկը
4. – գլխարկավոր սնկերը

8. Բազեդովյան հիվանդության պատճառն է.

1. – թիրօքսինի պակասը օրգանիզմում
2. – ինսուլինի պակասը օրգանիզմում
3. – ինսուլինի ավելցուկը օրգանիզմում
4. – թիրօքսինի ավելցուկը օրգանիզմում

9. Հիպերտոնիկ լուծույթում տեղադրված էրիթրոցիտները .

1. պայթում են թափելով պարունակությունը շրջակա միջավայր
2. – փոքրանում են ծավալով և կնճռոտվում են
3. – էլեկտրոլիտների փոխադրման համակարգերի ակտիվացման շնորհիվ պահպանում են սկավառականման ձևը
4. – կպչում են իրար (ենթարկվում են ագլյուտինացիայի)՝ առաջացնելով նստվածք

10. Մակերիկամների միջուկային շերտը արտադրում է.

1. սոմատոտրոպին հորմոնը
2. թիրօքսին հորմոնը
3. կորտիզոն հորմոնը
4. ադրենալին հորմոնը

11. Ստորև թվարկած կառուցվածքներից, որոնք բնորոշ չեն սնկերի բջիջներին

1. – կորիզակներ
2. – պլաստիդներ
3. – միտոքոնդրիումներ
4. – ռիբոսոմներ

12. Ստամոքսի ֆերմենտների բարձր ակտիվության համար օպտիմալ միջավայրը.

1. – հիմնային է
2. – չեզոք է
3. – թթվային է
4. – ցանկացած pH – ու միջավայրն է

13. Ստորև նշված հիվանդություններից ո՞ր հիվանդության հարուցիչն է բակտերիա

1. – տզային էնցեֆալիտ
2. – ժանտախտ
3. – կարմրախտ
4. – հեպատիտ A

14. Օրգանիդներ, որոնք առկա են ինչպես պրոկարիոտ, այնպես և էուկարիոտ բջիջներում.

1. – Էնդոպլազմային ցանց
2. – միտոքոնդրիումներ
3. – լիզոսոմներ
4. – ռիբոսոմներ

15. Իզական հետերոզամետությունը բնորոշ է.

1. – ճանճերին
2. – թռչուններին
3. – կաթնասուններին
4. – բոլոր պատասխանները ճիշտ են

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Քանի՞ զույգ հոմոլոգ քրոմոսոմ են պարունակում ոլոռի սերմերի ձևի ժառանգման համար պատասխանատու գեները :

17. aa x aa խաչասերման արդյունքում ստացած սերնդի քանի՞ տոկոսն է հոմոզիգոտ:

18. Aa x AA խաչասերման արդյունքում ստացած սերնդի քանի՞ տոկոսն է հոմոզիգոտ:

19. Քանի՞ տարբեր տիպի գամետ կարող է առաջացնել Aabb գենոտիպով տոմատի բույսը:

20. Քանի՞ տոկոս է շագանակագույն աչքերով աջիկ երեխայի ծնվելու հավանականությունը, երբ ծնողներից մեկը հոմոզիգոտ շագանակագույն աչքերով աջիկ է, իսկ մյուսը՝ հոմոզիգոտ շագանակագույն աչքերով ձախիկ է: Շագանակագույնը դոմինանտ է կապույտ աչքերի նկատմամբ, իսկ աջիկությունը՝ ձախիկության նկատմամբ: